ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ Ս. Դ. ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1890-ական թվականների սկզբներին Ս.Դ. հնչակյան կուսակցությունն ակտիվ գործունեություն էր ծավալել Կիլիկիայում՝ նպատակ ունենալով Սասունի հետ միասին այն դարձնել իր գլխավոր հենակետը ազատագրական պայքարի ծավալման, օսմանյան բռնատիրության դեմ պայքարի գործում:

Կիլիկիայում հնչակյան կուսակցության ականավոր գործիչներից էր Աղասին (Կարապետ Թուրսարգսյան): Ս. Դ. հնչակյան կենտրոնի կողմից նշանակվելով տեղի կուսակցության ընդհանուր ներկայացուցիչ՝ նա 1892 թ. աշնանը ապստամբության նախապատրաստման հանձնարարականով անցնում է երկրամաս՝ ստեղծելով մասնաճյուղեր, կազմակերպելով հայդուկային խմբեր, զինված ջոկատներ:

1895 թ. գարնան և ամռան ամիսներին Կիլիկիա է մտնում հնչակ գործիչների 2 խումբ, որոնց հայրենանվեր գործունեությունը չհապաղեց տալ իր պտուղները: Նրանք ինքնապաշտպանության պատրաստեցին և զինեցին Սվետիան, Դյորթ–Յոլը, Քեսապը, Զեյթունը, Ֆոնուզը: Աղասին նրանց բաշխում է ըստ բնակավայրերի՝ համապատասխան հանձնարարականներ տալով[1]: Վերջիններիս կազմակերպած հայդուկային խմբերը զգալի ավանդ ներդրեցին թուրք ջարդարարների դեմ մղվող պայքարում՝ հերոսության հրաշքներ գործելով ոչ միայն Զեյթունում, այլև բազմաթիվ բնակավայրերում՝ հետ մղելով թուրք հրոսակների հարձակումները, փրկելով հայրենակիցների կյանքը: Կարելի է համաձայնել Հր. Տասնապետյանի տեսակետի հետ, որ Զեյթունի ապստամբությամբ վերջ պիտի գտներ հնչակյան կուսակցության վեցամյա շքեղ, բայց կարճատև հերոսապատումը[2]:

Կյանքը և տարիների ընթացքում կուտակած պայքարի փորձն անում էին իրենց շտկումները, փոխվում էր կուսակցության մարտավարությունը, առաջ էին քաշվում նոր խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ էին նոր մոտեցումներ: Այդ հարցերն էին, մոտեցումների տարբերությունները, որոնք քննարկվեցին Լոնդոնի համագումարում և պատճառ դարձան կուսակցության պառակտման: Արևմտահայ հնչակյանները բաժանվում են Ա. Նազարբեկյանից՝ առաջնահերթ խնդիր համարելով արևմտահայության ազատագրումը և հրաժարվելով սոցիալիստական գաղափարա-

---

[1] *Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, հ. Ա. Բեյրութ, 1962, էջ 172-174: Ռ. Գ ա ս պ ա ր յ ա ն. Հայ ազգային կուսակցությունների գործունեությունը Կիլիկիայում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին.– Հայոց պատմության հարցեր, -11, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 160*

[2] *Հ. Տ ա ս ն ա պ ե տ յ ա ն. Պատմություն հայ հեղափոխական շարժման և Հայ հեղափոխական դաշնակցության, Լիբանան, 2009, էջ 84: Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 453, ց. 1, գ. 70, թ. 28:*

խոսությունից: Սա հիմքն էր նոր կազմակերպության, որն ավելի ուշ՝ 1898 թ. ստացավ Վերակազմյալ հնչակյան կուսակցություն անվանումը:

1896 թ. վերջերին հնչակյան նոր կենտրոնի կողմից հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ Ապահ Պետրոսյանը (Պետրոս Գըմգըմյան) նշանակվում է Կիլիկիայի ընդհանուր ներկայացուցիչ՝ ղեկավարելով Կիլիկիո նորընտիր վարչությունը: Աշխատանքները կազմակերպելու համար նա հաստատվում է Կիպրոսում: Ապահին հղած նամակում Աղասին խորհուրդ էր տալիս գործել խիստ զգույշ, իրավիճակը չլարել և զուր տեղը չգրգռել թուրքական մոլեռանդությունը, աշխատանք տանել ժողովրդի «տնտեսականապես հարստանալու» ուղղությամբ, աստիճանաբար նախապատրաստել համաժողովրդական ապստամբությունը: Սակայն աշխատանքներն անհրաժեշտ թափով առաջ չէին գնում: Պատճառը կոտորած, ավեր ու թալան տեսած կիլիկիահայության ոչ միանշանակ վերաբերմունքն էր հեղափոխական գործիչների նկատմամբ:

Ծանր հարված էին կրել նաև Կիլիկիայում գործող հնչակյան կառույցները: Կուսակցականների մեծ մասը ձերբակալվել էին, մի մասը՝ հեռացել երկրամասից, մյուսներն էլ մատնվել էին անգործության: Անհրաժեշտ էր շատ բան նորից սկսել, ինչին էլ ձեռնամուխ է լինում Ապահը:

Հրապարակվող վավերագրերը վերաբերում են կուսակցության գործունեությանը Կիլիկիայում 1896–1898 թթ.: Դրանք ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում կրճատումներով, թողնելով մեզ հետաքրքրող հարցերին վերաբերող մասերը: Բնագրերի շարահյուսությունը և կետադրությունը պահպանվել են, բայց փոխվել է ուղղագրությունը:

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

-1

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԱՎԵՏԻՍ ԵՎ ՄԱՐՈ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐԴԱՆԻ[3] ՆԱՄԱԿԻՑ՝ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԻՐ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

[Հունվար, 1896 թ.]

1895 – 2 օգոստոսին Կիլիկիայի վարչության որոշմամբ ինձ գործել ու պաշտոնավայր որոշվեցավ փայասի, Ա. Բ. և Գ. Մարաշի մասնաճյուղերը որով մի քանի օր ճանապարհորդել են վերջ եկա Մարոյի մասնաճյուղերին[4]

[3] *Վարդանը (Հարություն Խանիկյան) Կիլիկիայում Ս. Դ. հնչակյան կուսակցության առաջին գործիչներից է, որը նշանակվել էր Մարաշի և Պայասի մասնաճյուղերի պատասխանատու:*

[4] *Կիլիկիայում գործող Ս. Դ. հնչակյան մասնաճյուղերի մի մասի կուսակցական ծածկանունը: Այդպես է անվանվել ի պատիվ Մարո Նազարբեկյանի: Կիլիկիան կուսակցության կողմից պայմանականորեն բաժանվել էր «Մարո» և «Ավո» (Ավետիս Նազարբեկյանի անունով) մասնաճյուղերի, որոնք, իրենց հերթին, ըստ բնակավայրերի բաժանվում էին ավելի փոքր մասնաճյուղերի:*

մեջ ու այն ժամանակից մինչ ցայսօր չեմ ուզած ձեզի երկար նամակներ գրել, բացի տեղեկագրություններից, թեև շատ մը նամակներ ալ գրած եմ բայց չեմ գիտեր թե տեղ հասան, թե ոչ. որովհետև մինչ այժմ և ոչ մի տող գրություն ստացած չեմ, ատոր համար կասկածի մեջ եմ, թե արդյոք նամակները և գրությունները չեն հասներ որ ոչ մի պատասխան չենք ստանար[5]:

– Երբ հասա Ալեքսանդրեթ[6], նոյն միջոցին Ֆահրատի[7] քով տեսա մի նամակ, որին պարունակությունը հրավիրում էր հարսանիքի[8]. այդ հրավերը երբ ես տեսա ես իմ ծրագիրս փոխեցի ... առանց ժամանակ վատնելու լեռնային ճանապարհով անցա Մարդ մասնաճյուղերը:

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 238, թ. 1–2: Բնագիր: Ձեռագիր:

-2

ՔԱՂՎԱԾՆԵՐ ՄԿՐՏԻՉ ՊԱԼՅԱՆԻՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)[9]
ՈՒՂՂՎԱԾ ԲԱԲԿԵՆԻ[10] ՆԱՄԱԿԻՑ՝ ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2 փետրվարի 1896 թ.
Հալեպ

Ինչպես գիտենք Ուլնիո[11] պատերազմը սկսած ատեն շուրջը գտնված բոլոր գյուղացիք Ուլնիա ապաստանած են, թուրք կառավարությունն ալ այդ կողմերը եկած միջոցին պարապ գտնելով խեղճ գյուղացվոց տունները այրած, այգիներն ու ծառերը կտրած են, հյուպատոսներն ականատես ըլլալով, իրենց տեղեկագրին մեջ գրած են. 30.000 ավելի մարդիկ եկած են Ուլնիա: Անոնք իրենց տունները, գյուղերը երթալու որոշում տված են, ու՞ր գնան խեղճերը, որ տուն տեղ այգի չունին և տակավին մեծ մեծ գումարներ պիտի տան: Էշ թուրքին հասուցած վնասներն լեցնելու[12] և իրենց բարբարոսությունը գոցելու:

---

[5] *Կարծում ենք, որ նամակների մեծ մասն Ավետիս Նազարբեկյանը, անշուշտ, ստանում էր, բայց հաճախ չէր պատասխանում և կանոնավոր գրագրություն ապահովում տարբեր մասնաճյուղերի ու գործիչների հետ:*

[6] *Ծովափնյա քաղաք Հալեպի վիլայեթում, որն իր նշանակությամբ արևելյան միջերկրականի երկրորդ նավահանգիստն էր: Ս. Դ. հնչակյան կուսակցության կենտրոնի և Կիլիկիայի միջև կապն իրականացվում էր հիմնականում Ալեքսանդրետի միջոցով:*

[7] *Խոսքը Ս. Դ. հնչակյան կուսակցության անդամ Է. Թորոս Սահակյանի մասին է, որը առաջիններից մեկը միացավ Աղասի Թուրսարգսյանին և 1890-ական թվականների կեսերին զգալի աշխատանքներ էր տանում ազատագրական գաղափարախոսության տարածման ու կուսակցության մասնաճյուղերի ստեղծման ուղղությամբ:*

[8] *Նկատի ունի նախապատրաստվող ապստամբությունը:*

[9] *Ս. Դ. հնչակյան կուսակցության անդամ:*

[10] *Բաբկենը 1895–1897 թթ. Ս. Դ. հնչակյան կուսակցության Հալեպի մասնաճյուղի ներկայացուցիչն էր:*

[11] *Ուլնիա – Զեյթուն:*

[12] *Պետք է հասկանալ՝ վերացնելու:*

Աղասիի Մերսին ղրկվելը հետզհետե ստուգություն կ՚ առնի, Նազարեթ[13], Աբրո և ինքը երեքն միասին մի քանի զորքերով... պիտի հանձնվի գաղղիական շոգենավին ուղղակի Մարսեյլ տանելու համար[14]. թրքաց կողմանե կըսվի թե սոքա Ատանայի մեջ կառավարությունը բանտարկած է, իսկ ռուս հյուպատոսի դիտողությունը այն է, թե Մերսին շոգենավ չի գտնվելուն առթիվ թերևս Ատանայի մեջ սպասել հարկ լինի, զի անկարելի է, կառավարությունը նոցա ո՛նէ միոյն թելին դպնալ: Ուստի այս մասին ինչպես նախորդ նամակիս գրած էի, սակայն նորեն կը կրկնեմ թե, եթե կարելի է, մարդ մը ղրկեք Ատանա և կամ կերպով մը ստույգ տեղեկություն առնեք, նոցա գնալը կամ չը գնալը մանրամասնությամբ տեղեկանալ:

ՀԱԱ, ֆ. 453, ց.1, գ. 228, թ. 3-4: Բնագիր: Ձեռագիր:

-3

ՔԱՂՎԱԾՔ ԹՈՎՄԱՍ ԲԱՐՈՆԱԿՅԱՆԻՆ[15] ՈՒՂՂՎԱԾ
ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՑ

15 հուլիսի 1896 թ.
Լոնդոն

Եթե կա երկրագնդիս վրա մի վեհ և բառին կատարյալ նշանակությամբը ազնիվ գործ՝ այն է միլիոնավոր ճնշվածների փրկությանը համար աշխատելու գործը: Եվ եթե կա մի փառավոր մահ՝ նոյն գործի ճանապարհում մարտիրոսանալն է:

Մեր ազգի ներկա անտանելի վիճակը մեզ թող չի թուլացնե. որովհետև միակ չենք որ արյուն կը թափենք, զոհեր կը տանք, անոթի – ծարավ լեռները կ՚ ապաստանենք և այլն: Հապա՝ գազան սուլթանի բռնատիրությանը տակ գտնվող բոլո՛ր ազգերն էլ գրե-թե նոյն դրության մեջ են...

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 5, թ. 2: Բնագիր: Ձեռագիր:

[13] *Խոսքը Զեյթունի Նորաշխարհյան իշխանական տան ներկայացուցիչ, Զեյթունի ապստամբության փաստացի ղեկավար Նազարեթ չաուշի մասին է: Բաբկենը սխալվում է, քանզի Նազարեթը չի լքել Զեյթունը:*

[14] *Ըստ թուրքական իշխանության և զեյթունցիների միջև կնքված պայմանագրի՝ Աղասին իր զինակիցների հետ իրավունք ստացավ անարգել անցնելու արտասահման: Այդ մասին նա գրում է. «1896 թ. մարտի 1-ին մեկնեցա Զեյթունեն 3 ընկերներովս և 2 թիկնապահներով (խոսքը վերաբերում է Ապահին, Մլեհին, Հրաչյա Մարալին, Կարապետին և Նշանին – Ռ. Գ.) Եվրոպա: Պիտի բանտարկվեինք, թուլությամբ ու մեղսակցությամբ անգլ[իական] ֆրանս[իական] հյուպատոսներուն, բայց զմեզ ազատեց ռուս հյուպատոսը... Գնդապետ Յաքիմանսքին, վեհափառ ձարի հյուպատոսը, իր պաշտպան թաթերուն ներքև իտալ[ական] հյուպատոսի աջակցությամբ զմեզ ապահով հասցուց Մերսին, ուրկե անցա Եվրոպա» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 10, գ. 5, թ. 2):*

[15] *Թովմաս Բարունակյանն Ապահի քեռորդին է:*

-4

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՂԱՍՈՒ ՆԱՄԱԿԻՑ՝ ՀԱՃԸՆԻ ԵՎ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԾԱՆՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

22 ապրիլի 1897 թ.
Փարիզ

... Քանի մը օր վերջ, Կիլիկիայեն ընդարձակ նամակներ առի. Հաճընը կոտորածի ենթակա և պաշարման վիճակի մեջ եղած էր. պ. Աշոտը[16] կը գրեր, որ 200 ոսկի հասցնելու էր, եթե ոչ «ծննդավայրդ կորած է»[17]: Իսկույն Արշակին հետ ... 500 ֆր. ուղարկած էր այդտեղի կարոտյալներուն համար ... զոր Արտեմիսի[18] ձեռքով ուղարկեցի Աշոտին:

Միրելի Ապահ, սիրտս կտոր-կտոր է, ընտանեկան վիճակս շատ խեղճ է, շատ խեղճ ... Հայրս աղիողորմ նամակ մը գրած էր ինձ ... կառավարությունը զինք պաշտոնանկ ըրած է և շատ չարչարած, որ իր որդին եմ. ինքզինքն արդարացուցած է, որ իր զավակ Կարապետը 5 տարի է մեռած (է): Սակայն կառավարությունը Նազարբեկի հայտարարության վրա նորեն ձերբակալած է զինք և բոլոր հարստությունն ու կալվածները գրաված է: Հայրս ... ճարպիկությամբ մը հաջողած է փախչել անոնց ձեռքերեն և ապաստանել Ատանա: Մայրս և եղբայրներս մնացել են անոթի ճեպելի[19] մեջ, չի կարող բերել տալ զանոնք. կառավարությունը լսելով, որ ես Չաք– Մարզվան մտած եմ[20] (անպիտան Նշանը[21] իմ անունս չը պիտի տար) զանոնք գրավի դրած է իմ փոխարեն[22]:

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 139, թ. 2–3: Բնագիր: Ձեռագիր:

---

[16] *Աշոտ Շահրամյանը Կիլիկիայում Ս. Դ. հնչակյան կուսակցության գործիչներից էր: 1897 թ. նա Մերսինի շրջանի պատասխանատուն էր, որը համակարգում էր նաև Սվետիայի և Ալեքսանդրետի մասնաճյուղերի հետ տարվող աշխատանքները:*

[17] *Նկատի ունի Աղասու ծննդավայր Հաճընն քաղաքը:*

[18] *Արտեմիսը Ս. Դ. հնչակյան կուսակցության անդամ, հայ ազգային-ազատագրական պայքարի հայտնի գործիչ Միհրան Գայանն է: Նա Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբության առաջնորդներից և մասնակիցներից էր, ղեկավարել էր իր հայրենի քաղաք Հաճընի պաշտպանությունը 1909 թ. Կիլիկիո ջարդերի ժամանակ, 1920 թ. եղել Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի անդամ:*

[19] *Մեզ չհաջողվեց պարզել, թե ո՞ր բնակավայրն ի նկատի ունի հեղինակը:*

[20] *Աղասին Չոք – Մարզվանում (Դյորթ – Յոլ) գործել է 1892 թ. վերջերին՝ համագործակցելով տեղի վարժարանի տնօրեն Միհրան Գայանի հետ, որն էլ նշանակվում է հնչակյան մասնաճյուղի ղեկավար:*

[21] *Ս. Դ. հնչակյան կուսակցության անդամներից, որը Աղասու հետ գործել էր Կիլիկիայում:*

[22] *Ավելի ուշ Աղասու հայրն ազատ է արձակվում:*

-5

ՔԱՂՎԱԾՔ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՑ՝ ԿԻԼԻԿԻԱ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 մայիսի 1897 թ.
Ալեքսանդրիա

… Հավանորեն քայլ մը ևս առնեմ և հոնկե[23] մտնեմ Կիլիկիա ո՛չ թե ցնորական հոյսերով ու տաք գլուխ շարժումներով քաջարի ժողովրդի մը հանգիստը, երջանկությունը և կյանքը խռովելու, այլ քարոզելու մեր եղբայրներուն համերաշխություն, ուշիմություն և բացարձակորեն խաղաղասիրական քողի տակ լուծել մնջիկ տոկուն ու հաստատուն նախապատրաստության:

Թեև մինչև ցարդ թե՛ պաշտոնական, թե՛ անհատական նամակներով և թե՛ մեր պաշտոնաթերթով[24] խոհեմության և իմաստության քարոզություններ կ՚ընենք շարունակ, բայց կենդանի խոսքը հայտնի է, թե ավելի հզոր ազդեցություն կունենա ժողովրդին վրա. ահա այս պատճառով մտադիր եմ մեջները ուսումնասիրելու համար միանգամայն տեղվոյն վրա՝ ժողովրդին արդի կացությունը[25]:

ՀԱԱ, Ֆ. 453, ց. 1, գ. 9, թ. 1–2: Բնագիր: Ձեռագիր:

-6

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԿՈՐՅՈՒՆԻՆ[26] ՈՒՂՂՎԱԾ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՑ՝ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԵՎ ԻՐԵՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 հունիսի 1897 թ.
Կիպրոս

… Եթե այդտեղ մնալդ անապահով կը գտնես ու կուզես անպատճառ արտասահման անցնել, այն ժամանակ շատ կարևոր է, որ մեկնելեդ անմիջապես առաջ պաշտոնդ մեկ այլ վստահելի և ճարպիկ ընկերոջ մը հանձնես ու ապա մեկնես, որպեսզի ներկա պարագաներուն մեջ գործերը չի խանգարվին ու զգալի հարված մը չի տրվի ընդհանրության օգտին:

[23] *Նկատի ունի Կիպրոս կղզին:*

[24] *Խոսքը Ս. Դ. հնչակյան կուսակցության «Հնչակ» պաշտոնաթերթի մասին է:*

[25] *Ձևակերպումն անհաջող է: Խոսքը վերաբերում է տեղում գործելուն, իրավիճակին ծանոթանալուն, ժողովրդի տրամադրությունները շոշոփելուն:*

[26] *Կորյունը (Տիգրան Տոնապետյան) դեռևս Ադասու կողմից նշանակվել էր Կիլիկիո բոլոր մասնաճյուղերի միջև կապի պատասխանատու, ապահովելով նաև կապն արտաքին աշխարհի հետ: Նա իր վրա էր հրավիրել թուրքական ոստիկանության ուշադրությունը, և Ապահն առաջարկում էր վտանգի դեպքում փոխարինող գտնել իրեն:*

... Լսեցինք, որ Ալեքսանդրեթի մեջ տարի առաջ ժամագործություն ընող Արաբկիրցի Փիլիպպոս Խասիկյանը[27] իր Հայրենիքեն ելնելով հոդ հասած է արտասահման մեկնելու նպատակով, կը գործեր շատ ճարպիկությամբ և եթե ... կը խոստանա շարունակել Ձեր պաշտոնը այն ժամանակ մենք ալ մեր կողմեն կապահովցնենք իր ապրուստի միջոցը և այլն: Հիշյալը ազգասիրական զգացումներով ինձ ծանոթ ըլլալով՝ հոյս ունեմ թե այս ազգօգուտ մեկ առաջարկը չը պիտի մերժվի հիշյալի կողմեն: Իսկ եթե հակառակ պարագային ինչ-ինչ բանավոր պատճառներով չի կարենա ընդունել, այն ժամանակ գուցե Ատանայի կողմեն մեկը գա Ձեզ ներկայանա[28]:

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 10, թ. 1-2: Բնագիր: Ձեռագիր:

-7

ՔԱՂՎԱԾՔ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ[29] ՈՒՂՂՎԱԾ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՑ՝
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ–ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

5 հունիսի 1897 թ.
Կիպրոս

… Գործերը բավական լավ կարգադրված վիճակի մեջ են այժմ, իսկ երկրի մոտակա վայրերի թոյլ վիճակն ալ, կը հուսանք մոտ ատեն բարեփոխել, այդ մասին հարկ եղած թղթակցությունները և հարաբերությունները հաստատելով, ասոնք խիստ անհրաժեշտ և կարևոր են մեր ապագա գործունեության … համար: Մանավանդ Սվետիան[30] և Ալեքսանդրետ, որոնք գրեթե այսօր մեր ձեռքին մեջ ունենք, միմիայն զանոնք վերջնականապես մեզ հետ կապելու և որ ամենակարևորն է՝ գաղթականության հոսանքը արգելելու համար (որ վերջերս սկսած է ավելի շարժուն կերպարանք մը առնել) պետք կզգացվի փոքրիկ գումարի մը: Այս մասին ես գրեցի մեր կենտրոնի ընկերներուն, դուք ալ կարող եք շեշտել զայն:

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 11, թ. 1: Ձեռագիր: Բնագիր:

[27] *Խոսքը Ս. Դ. հնչակյան կուսակցության անդամ Փիլիպպոս Խասիկյանի մասին է:*

[28] *Քննարկվում էր Կորյունին հնչակյան մեկ այլ գործչով փոխարինելու հարցը:*

[29] *Լևոն Մկրտչյանը Ս. Դ. հնչակյան կուսակցության ակնառու գործիչներից էր: 1896 թ. Լոնդոնի համագումարում արևմտահայ հնչակյանները Լ. Մկրտչյանի, Ա. Արփիարյանի, Մ. Սվազլյանի, Մ. Տամատյանի և Ս. Սուրենյանի գլխավորությամբ ընտրում են կուսակցության առանձին վարչություն՝ բաժանվելով Նազարբեկյաններից:*

[30] *Մուսա լեռան լանջերին թիկնած՝ Միջերկրական ծովի ափին գտնվող Սվետիայի շրջանում կար հայկական 7 գյուղ:*

-8

ՔԱՂՎԱԾՔ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՂԱՐԻԲ ՊՈՅԱՃՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՑ՝ ՀԱՃԸՆԻ ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7 հունիսի 1897 թ.
Մերսին

… Հաճընցիք խիստ թշվառ վիճակի մեջ են, կառավարության բռնությունը խիստ շատ է … բանտարկված են Խրտման, Թերզյան[31] և շատերը. մարդասպանը անկուշտ է, խեղճ ու անմեղները կը չարչարին, արդար դատաստան երբեք չի կա. Գայանը Ուլնիայեն հայրենիք գալեն վերջը կրկին գնաց, հունիսին Մարաշ բանտարկեցին. հիմա ներումեն ազատ է և կը գտնվի Հաճընն. վիճակնիս ձեզ ծանոթ է:

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 77, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

-9

ՔԱՂՎԱԾՔ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՂԵՎՈՆԴ ՇԱՀՄԻՐԻ[32] ՆԱՄԱԿԻՑ՝ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՏԻՐՈՂ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

31 դեկտեմբերի 1897 թ.
Ֆամակուսթա

Այսօր կիլիկեցի ընկեր Մեդրաքը[33] հոս եկավ Կիլիկիո մասին կարգադրություններ մը ընելու համար, խորհրդակցելու պ. Սվազյանի[34] հետ, ըստ առած նոր տեղեկությանց համեմատ: Բանտարկյալները[35] դեռ կը մնան բանտերու մեջ, հարցաքննությունները կը շարունակվեն: Ձեյթունը պաշարված է կ՚ըսվի, թեպետ այդ լուրը ստեղծող թերթին (անգլիական) ճշմարտությունը կասկածելի է, բայց ինչ որ ալ ըլլա մտահոգություն կը պատճառե, ասոնց մասին ի՞նչ կը խորհիք, Ձեյթունցիք ի՞նչ դիրք կրնան բռնել, թե ոնէ բան ընելու անկարող են…

ՀԱԱ, Ֆ. 453, ց.1, գ. 86, թ. 25: Ձեռագիր: Բնագիր:

[31] *Ս. Դ. հնչակյան կուսակցության անդամներ էին:*
[32] *Ս. Դ. հնչակյան կուսակցության Կիպրոսի գործիչներից:*
[33] *Մեդրակի ինքնությունը չհաջողվեց պարզել:*
[34] *Մ. Սվազյանը Ս. Դ. հնչակյան կուսակցության հայտնի գործիչներից և Վերակազմյալ հնչակյան կուսակցության ղեկավարներից էր:*
[35] *Ձեյթունի ապստամբությունից և Կիլիկիայի տարբեր վայրերում տեղի ունեցած ինքնապաշտպանությունից հետո թուրքական իշխանությունները ձերբակալել էին դիմադրական մարտերի ղեկավարներին, հնչակյան գործիչներին:*

-10

ՔԱՂՎԱԾՔ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՀՐԱՆ ԹԵԼՅԱՆԻ[36] ՆԱՄԱԿԻՑ՝ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ[37] ՄԵՐՍԻՆԻՑ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 մարտի 1898 թ.
Ալեքսանդրիա

… Բանտարկյալները խմբովին հանկարծակիի եկած են մարտ 1/13 ի գիշերը… երբ զիրենք արթնցնելով հարկադրած են իսկոյն ուղևորիլ շոգենավ մը որ կ՚սպասե եղեր Մերսինի խորշը:

Լուրը կայծակի նման տարածվեր է քաղքին մեջ գիշերանց և ծնողաց ու ժողովրդյան աղեկտուր լացն ու կոծը ամենաթեթև ազդեցությունն անգամ չեն ունեցեր առավոտյան հետաձգելու այդ մեկնումը, որպեսզի գեթ միջոց տրվի հայոց հոգալու իրենց սիրելիներուն պետքերը և կամ անգամ մ՚ևս զիրենք ողջագուրելու:

Քահանա, վարդապետ, սարկավագ ամենքն ալ նոյն խստությամբ հսկողության ներքև փոխադրվեր են շոգենավ. հազիվ մեկ քանի հայրեր կամ մայրեր կամ մտերիմներ համարձակեր են ճեղքել շղթան գրկելու համար իրենց մերձավորները: Շոգենավը մեկներ է հետևյալ օր փոխադրելու համար բանտարկյալները (ըստ ոմանց Պոլսո ճամփով, ըստ ոմանց Տետե աղաճի ճամփով Էտիռնե ուր պիտի տեսնվի իրենց դատը):

ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 91, թ. 4–5: Բնագիր: Ձեռագիր:

-11

ՔԱՂՎԱԾՔ ԱՊԱՀ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԱՄԱԿԻՑ՝ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

15 օգոստոսի 1898 թ.
Ալեքսանդրիա

Բայց և այնպես Կիլիկիո մասնաճյուղերուն հետ եղած հարաբերությունները, վերջին դեպքերուն բերմամբ, այսօր այդտեղի հետ մեր պաշտոնական հարաբերությունները կը հաստատվեն լոկ Իսկենտերունի[38] ճամբով Կորյունի միջոցով[39]: Գիտեք, որ Կիլիկիան 2 նահանգային շրջանակի

---

[36] *Միհրան Թելյանը Ս. Դ. հնչակյան կուսակցության Եգիպտոսի գործիչներից էր:*

[37] *Բանտարկյալների մեջ մեծ թիվ էին կազմում մտավորականները, հայության մեջ որոշակի դիրք և հեղինակություն ունեցող անձինք:*

[38] *Ալեքսանդրետ նավահանգիստը:*

[39] *Կորյունն այդ ժամանակ ազատվել էր բանտից:*

էր բաժնված, Հալեպ և Ատանա: Մերսինի ծանոթ դեպքերեն[40] ի վեր Ատանայի նահանգին հետ լոկ անուղղակի հարաբերություններ ունենք Աշոտի և Մեղրակ Թոստումճյանի միջոցով և հրահանգներն ալ այս վերջնոց ձեռամբ հղեցինք. Իսկ Հալեպի նահանգին հետ մեր հարաբերությունները կը կատարվեն Կորյունի ձեռամբ, որուն խրկած ենք նաև ընդհ[անուր] ժողովի հրահանգները:

ՀԱԱ, Ֆ. 453, ց. 1, գ. 70, թ. 28–29: Բնագիր: Ձեռագիր:

---

[40] *Նկատի ունի Մերսինում կատարված ձերբակալությունները:*